## Արձանագրություն N 2-1

## ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/26 ՀՀ Սյունիքի մարզի գ. Գորայքի միջնակարգ դպրոցի նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

06.10.2025թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մնացականյան

Հանձնաժողովի անդամներ՝
Ն. Ղազարյան
Ա. Հյուսիսյան
Է. Առուստամյան
Ա. Նալբանդյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

### 1.Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

---

( Հ. Մնացականյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2025 թվականի հոկտեմբերի 6-ին, ժամը 11:30-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ԵՎՐՈՍՏՐՈՅ» ՍՊԸ «ՍՄ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ «ԳՈԼԴ ԼԱՅԹ» ՍՊԸ կոնսորցիում | **215 222 120** | 157 500 000 | 31 500 000 | 189 000 000 |

Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

## 2. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ. հասցեն

---

( Հ. Մնացականյան)

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե | Կապի միջոց | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | «ԵՎՐՈՍՏՐՈՅ» ՍՊԸ «ՍՄ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ «ԳՈԼԴ ԼԱՅԹ» ՍՊԸ կոնսորցիում | ք. Երևան, Էրեբունի, Դավիթ Բեկի փ., տուն 1/1 ք. Երևան, Ավան, Չարենցի փ., 17շ., բն 32 ք. Երևան, Շենգավիթ, Նորագավիթ 9 փ., տուն 29 | 077-29-00-40 077-37-46-86 094-22-13-13 | evrostroy.ga@mail.ru, smproduction2025@mail.ru, gold-light@bk.ru |

*Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ - 0:*

## 3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

( Հ. Մնացականյան)

3.1 Քանի որ «ԵՎՐՈՍՏՐՈՅ», «ՍՄ ՊՐՈԴԱԿՇՆ» և «ԳՈԼԴ ԼԱՅԹ» ՍՊԸ-ների կոնսորցիումի (այսուհետ մասնակից) կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/23 ծածկագրով ընթացագարգի շրջանակներում 24.09.2025 թվականին հարցում էր կատարվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե, ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քաղաքապետարան, ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամ, և 01.10.2025 թվականին ստացվել են պատասխաններ, հետևաբար գնահատող հանձնաժողովը որոշեց կրկնակի հարցում չկատարել:

3.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատման նիստը հրավիրել 08.10.2025թ 11:30-ին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Հ. Մնացականյան

---------------------------------------- Ն. Ղազարյան

---------------------------------------- Ա. Հյուսիսյան

---------------------------------------- Է. Առուստամյան

---------------------------------------- Ա. Նալբանդյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Գ. Հակոբյան